



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցոյ Ծովի

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>

SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading,

24th March 2019

Bulletin 12/2019

Fourth Sunday of Great Lent—The Steward

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԵՓԵՍՍՑԻՆԵՐ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 4:17-5:14

Ուրեմն սա՛ կը յայտարարեմ ու Տէրոջմով կը վկայեմ, որ դուք այլեւս չընթանաք այնպէս՝ ինչպէս ուրիշ հեթանոսները կընթանան, իրենց միտքին ունայնութեան մէջ: Անոնց միտքը խաւարած է, եւ իրենք ուժացած են Աստուծոյ կեանքէն՝ իրենց մէջ եղած անգիտութեան եւ իրենց սիրտին կուրուրեան պատճառով: Անզգայ դարձած՝ անձնատուր եղան ցովութեան, որպէսզի ամէն տեսակ անմաքրութիւն գործեն ազահութեամբ: Բայց դուք ա՛յսպէս չտրվեցաք Քրիստոսը, եթէ իսկապէս լսեցիք զինք եւ ստրվեցաք իրմէ՝ Յիսուսի մէջ եղող ճշմարտութեան համաձայն՝ որպէսզի թօթափէք ձեր նախկին վարքին վերաբերող հին մարդը, - որ ապականած է խաբեբայ ցանկութիւններով, - նորոգուիք ձեր միտքին հոգիով, ու հագնիք նո՛ր մարդը, որ ստեղծուած է արդարութեամբ եւ ճշմարիտ սրբութեամբ՝ Աստուծոյ պատկերին համաձայն:

Ուստի՝ թօթափելով ստելը՝ ճշմարտութիւնը խօսեցէք իրարու հետ՝, որովհետեւ մենք իրարու անդամներ ենք: Բարկացէ՛ք, բայց մի՛ մեղանչէք. արելը թող մայր չմտնէ ձեր բարկացած վիճակին վրայ, ու տեղ մի՛ տաք Չարախօսին: Ա՛ն որ կը գողնար՝ ա՛լ թող չգողնայ. այլ մանաւանդ թող աշխատի՝ իր ձեռքերով գործելով ինչ որ բարի է, որպէսզի բան մը ունենայ տալու կարօտեալին: Ո՛չ մէկ վատ խօսք թող ելլէ ձեր բերանէն, հապա՛ ինչ որ բարի է, շինութեան կարիքին համեմատ, որպէսզի շնորհք տայ լսողներուն: Եւ մի՛ տրտմեցնէք Աստուծոյ Սուրբ Հոգին, որով դուք կնքուեցաք ազատագրութեան օրուան համար: Ամէն տեսակ դառնութիւն, զայրոյթ, բարկութիւն, գոչիւն ու հայիտութիւն թող վերցուին ձեզմէ՝ ամէն տեսակ չարամտութեան հետ: Եւ քա՛ղցր եղէք իրարու հանդէպ, զթած, ներելով իրարու, ինչպէս Աստուած Քրիստոսով ներեց ձեզի:

Ուրեմն նմանեցէ՛ք Աստուծոյ՝ սիրելի զաւակներու պէս, եւ ընթացէ՛ք սիրոյ մէջ, ինչպէս Քրիստոս ալ մեզ սիրեց ու մեզի համար ընծայեց ինքզինք Աստուծոյ՝ որպէս պատարագ ու զոհ, անուշաբոյր հոտ ըլլալով:

Բայց պոռնկութեան եւ ամէն տեսակ անմաքրութեան կամ ազահութեան անունն իսկ թող չյիշուի ձեր մէջ, (ինչպէս կը պատշաճի սուրբերուն,) ո՛չ ալ լրբութեան, յիմար խօսակցութեան կամ խեղկատակութեան, որոնք չեն պատշաճիր. այլ փոխարէնը շնորհակալութիւն յայտնեցէք: Քանի որ գիտէք՝ թէ ո՛չ մէկ պոռնկող, կամ անմաքուր, կամ ազահ, որ կռապաշտ է, ունի որեւէ ժառանգութիւն Քրիստոսի եւ Աստուծոյ թագաւորութեան մէջ:

Ո՛չ մէկը թող խաբէ ձեզ ունայն խօսքերով, որովհետեւ այս բաներուն պատճառով Աստուծոյ բարկութիւնը կու գայ անհնազանդութեան որդիներուն վրայ: Ուրեմն բաժնեկից մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ ժամանակին դուք խաւար էիք, բայց հիմա լոյս էք Տէրոջմով. ուստի ընթացէ՛ք լոյսի զաւակներու պէս, քանի որ Հոգիին պտուղը ամէն տեսակ բարութեամբ, արդարութեամբ ու ճշմարտութեամբ է: Քննեցէ՛ք թէ ի՛նչ է Տէրոջ հաճելին, եւ ընկերակից մի՛ ըլլաք խաւարին անպտուղ գործերուն, այլ փոխարէնը կշտամբեցէ՛ք զանոնք:

Որովհետեւ անոնց ըրած գաղտնի բաներուն մասին խօսիլն իսկ ամօթ է. բայց ամէն բան որ կշտամբուած է՝ կը յայտնաբերուի լոյսին միջոցով, որովհետեւ լոյսն է որ կը յայտնաբերէ ամէն ինչ:

Ուստի կըրսէ. «Արթնցի՛ր, դուն որ կը քնանաս, ու կանգնե՛ մեռելներէն, եւ Քրիստոս պիտի փայլի քու վրայ»:

The Epistle of St Paul to the Ephesians 4:17-5:14;

The New Life

Now this I say and testify in the Lord, that you must no longer walk as the Gentiles do, in the futility of their minds. They are darkened in their understanding, alienated from the life of God because of the ignorance that is in them, due to their hardness of heart. They have become callous and have given themselves up to sensuality, greedy to practice every kind of impurity. But that is not the way you learned Christ!— assuming that you have heard about him and were taught in him, as the truth is in Jesus, to put off your old self,^f which belongs to your former manner of life and is corrupt through deceitful desires, and to be renewed in the spirit of your minds, and to put on the new self, created after the likeness of God in true righteousness and holiness.

Therefore, having put away falsehood, let each one of you speak the truth with his neighbor, for we are members one of another. Be angry and do not sin; do not let the sun go down on your anger, and give no opportunity to the devil. Let the thief no longer steal, but rather let him labor, doing honest work with his own hands, so that he may have something to share with anyone in need. Let no corrupting talk come out of your mouths, but only such as is good for building up, as fits the occasion, that it may give grace to those who hear. And do not grieve the Holy Spirit of God, by whom you were sealed for the day of redemption. Let all bitterness and wrath and anger and clamor and slander be put away from you, along with all malice. Be kind to one another, tenderhearted, forgiving one another, as God in Christ forgave you.

Walk in Love

Therefore be imitators of God, as beloved children. And walk in love, as Christ loved us and gave himself up for us, a fragrant offering and sacrifice to God.

But sexual immorality and all impurity or covetousness must not even be named among you, as is proper among saints. Let there be no filthiness nor foolish talk nor crude joking, which are out of place, but instead let there be thanksgiving. For you may be sure of this, that everyone who is sexually immoral or impure, or who is covetous (that is, an idolater), has no inheritance in the kingdom of Christ and God. Let no one deceive you with empty words, for because of these things the wrath of God comes upon the sons of disobedience. Therefore do not become partners with them; for at one time you were darkness, but now you are light in the Lord. Walk as children of light (for the fruit of light is found in all that is good and right and true), and try to discern what is pleasing to the Lord. Take no part in the unfruitful works of darkness, but instead expose them. For it is shameful even to speak of the things that they do in secret. But when anything is exposed by the light, it becomes visible, for anything that becomes visible is light. Therefore it says,

“Awake, O sleeper, and arise from the dead, and Christ will shine on you.”

2: A short interpretation of the Scripture reading

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԷՏԱՐԱՆԵՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 16:1-31

Իր աշակերտներուն ալ ըսաւ. «Հարուստ մարդ մը կար՝ որ տնտես մը ունէր. ասիկա ամբաստանուեցաւ անոր առջեւ՝ որպէս թէ կը փճացնէ անոր ինչքը: Ուստի կանչեց զայն եւ ըսաւ անոր. “Այս ի՞նչ է՝ որ քու մասիդ կը լսեմ. տնտեսութեանդ հաշի՛ւը տուր, որովհետեւ ա՛լ չես կրնար տնտես ըլլալ”: Տնտեսը ըսաւ ինքնիրեն. “Ի՞նչ ընեմ, որովհետեւ տէրս տնտեսութիւնը կ’առնէ ինձմէ. չեմ կրնար հողագործ ըլլալ՝, կամչնամ մուրալ: Գիտե՛մ ինչ պիտի ընեմ, որպէսզի երբ հեռացուիմ իմ տնտեսութենէս՝ ընդունին զիս իրենց տունը: Եւ իրեն կանչելով իր տիրոջ պարտապաններէն իրաքանչիւրը, ըսաւ առաջինին. “Դուն ո՞րչափ կը պարտիս իմ տիրոջս”: Ան ալ ըսաւ.



The Unjust Steward

“Հարիւր մար ձեթ”։ Ըսաւ անոր. “Ա՛ն մուրհակդ, ու շուտով նստե՛ «յիսո՛ւն» գրե՛”։ Յետոյ ըսաւ միւսին. “Դո՛ւն ո՛ր ղչափ կը պարտիս”։ Ան ալ ըսաւ. “Հարիւր քոռ ցորեն”։ Ըսաւ անոր. “Ա՛ն մուրհակդ եւ «ութսո՛ւն» գրե՛”։ Տէրը գովեց անիրաւ տնտեսը՝ որ ուշիմութեամբ վարուեցաւ. որովհետեւ այս աշխարհի որդիները աւելի՛ ուշիմ են իրենց սերունդին մէջ՝ քան լոյսի որդիները։ Ես ալ կըսեմ ձեզի. “Բարեկամնե՛ր ըրէք ձեզի անիրաւ մամոնայէն, որպէսզի երբ ան պակսի՝, ընդունին ձեզ յաւիտենական բնակարաններու մէջ”։

Ա՛ն որ ամենափոքր բանին մէջ հաւատարիմ է՝ շատին մէջ ալ հաւատարիմ կըլլայ, եւ ա՛ն որ ամենափոքրին մէջ անիրաւ է՝ շատին մէջ ալ անիրաւ կըլլայ։ Ուրեմն եթէ անիրաւ մամոնային մէջ հաւատարիմ չըլլաք, ճշմարիտ հարստութիւնը ո՛վ պիտի վստահի ձեզի։ Եթէ ուրիշին բանին մէջ հաւատարիմ չըլլաք, ձե՛րը ո՛վ պիտի տայ ձեզի։ Ո՛չ մէկ ծառայ կրնայ ծառայել երկու տիրոջ. որովհետեւ կա՛մ մէկը պիտի ատէ եւ միւսը սիրէ, կա՛մ մէկուն պիտի յարի՝ ու միւսը արհամարհէ։ Չէք կրնար ծառայել Աստուծոյ եւ մամոնային»։

Փարիսեցիներն ալ՝ որոնք արծաթասէր էին, այս բոլոր բաները լսելով՝ կը քամահրէին զայն։ Եւ ըսաւ անոնց. «Դո՛ւք էք որ մարդոց առջեւ կարդարացնէք դուք ձեզ, բայց Աստուած գիտէ՝ ձեր սիրտերը. որովհետեւ մարդոց մէջ բարձր գնահատուածը՝ զարշելի է Աստուծոյ առջեւ։

Օրէնքն ու Մարգարէները մինչեւ Յովհաննէս էին. այդ ատենէն ետք Աստուծոյ թագաւորութի՛ւնը կաւետուի, եւ ամէն մէկը կարտորայ մտնել անոր մէջ։ Աւելի դիւրին է՝ որ երկինքն ու երկիրը անցնին, քան Օրէնքէն մէ՛կ նշանագիր իյնայ։

Ո՛վ որ կարձակէ իր կինը եւ կամուսնանայ ուրիշի մը հետ՝ շնութիւն կընէ, եւ ո՛վ որ կամուսնանայ իր ամուսինէն արձակուած կնոջ մը հետ՝ շնութիւն կընէ»։ «Հարուստ մարդ մը կար՝ որ ծիրանի ու բեռեզ կը հագնէր, եւ ամէն օր փառահեղ խրախճանք կը սարքէր՝։ Ղազարոս անունով աղքատ մըն ալ կար՝ պալարներով ծածկուած, որ պառկած էր անոր դրան քով, ու կը ցանկար կշտանալ հարուստին սեղանէն ինկած փշրանքներէն.

նաեւ շուներն ալ կու գային եւ կը լզէին անոր պալարները։ Այդ աղքատը մեռաւ, ու հրեշտակները Աբրահամի գոգը տարին զայն։ Հարուստն ալ մեռաւ եւ թաղուեցաւ։ Մինչ դժոխքը՝ տանջանքի մէջ էր, իր աչքերը բարձրացնելով՝ հեռուէն տեսաւ Աբրահամը, ու Ղազարոսը՝ անոր գոգը հանգիստ նստած։ Ուստի գոչեց. “Հա՛յր Աբրահամ, ողորմե՛ ինձի ու դրկե՛ Ղազարոսը, որպէսզի ջուրի մէջ թաթխէ իր մատին ծայրը եւ գովացնէ լեզուս, որովհետեւ կը տանջուիմ այս բոցին մէջ”։ Աբրահամ ըսաւ. “Որդեա՛կ, յիշե՛ թէ դուն կեանքիդ ընթացքին ստացար բարիքներդ, նմանապէս Ղազարոս՝ չարիքներ. հիմա ան (հոս) կը մխիթարուի, ու դուն կը տանջուիս։ Այս բոլորէն զատ՝ մեր եւ ձեր մէջտեղ հաստատուած մեծ անդունդ մը կայ, որպէսզի ասկէ ձեզի անցնիլ ուզողները չկարենան, ո՛չ ալ ասկէ մեզի գալ ուզողները անցնին”։ Ան ալ ըսաւ. “Ուրեմն կը խնդրեմ քեզմէ, հա՛յր, որ դրկես զայն հօրս տունը, քանի որ հինգ եղբայր ունիմ. որպէսզի վկայէ անոնց, որ անոնք ալ չգան այս տանջանքի տեղը”։ Աբրահամ ըսաւ անոր. “Անոնք ունին Մովսէսն ու մարգարէները, թող անո՛նց մտիկ ընեն”։ Ան ալ ըսաւ. “Ո՛չ, հա՛յր Աբրահամ. հապա եթէ մեռելներէ՛ն մէկը երթայ անոնց՝ պիտի ապաշխարեն”։ Իսկ ան ըսաւ անոր. “Եթէ մտիկ չեն ըներ Մովսէսի եւ մարգարէներուն, պիտի չհամոզուին՝ նոյնիսկ եթէ մէկը մեռելներէն յարութիւն առնէ”»։

The Holy Gospel of Jesus Christ according to Luke 16:1-31

The Parable of the Dishonest Manager

He also said to the disciples, “There was a rich man who had a manager, and charges were brought to him that this man was wasting his possessions. And he called him and said to him, ‘What is this that I hear about you? Turn in the account of your management, for you can no longer be manager.’ And the manager said to himself, ‘What shall I do, since my master is taking the management away from me? I am not strong enough to dig, and I am ashamed to beg. I have decided what to do, so that when I am removed from management, people may receive me into their houses.’ So, summoning his master’s debtors one by one, he said to the first, ‘How much do you owe my master?’ He said, ‘A hundred measures^a of oil.’ He said to him, ‘Take your bill, and sit down quickly and write fifty.’ Then he said to another, ‘And how much do you owe?’ He said, ‘A hundred measures^b of wheat.’ He said to him,

‘Take your bill, and sit down quickly and write fifty.’ Then he said to another, ‘And how much do you owe?’ He said, ‘A hundred measures^b of wheat.’ He said to him, ‘Take your bill, and write eighty.’ The master commended the dishonest manager for his shrewdness. For the sons of this world^c are more shrewd in dealing with their own generation than the sons of light. And I tell you, make friends for yourselves by means of unrighteous wealth,^d so that when it fails they may receive you into the eternal dwellings.

“One who is faithful in a very little is also faithful in much, and one who is dishonest in a very little is also dishonest in much. If then you have not been faithful in the unrighteous wealth, who will entrust to you the true riches? And if you have not been faithful in that which is another’s, who will give you that which is your own? No servant can serve two masters, for either he will hate the one and love the other, or he will be devoted to the one and despise the other. You cannot serve God and money.”

The Law and the Kingdom of God

The Pharisees, who were lovers of money, heard all these things, and they ridiculed him. And he said to them, “You are those who justify yourselves before men, but God knows your hearts. For what is exalted among men is an abomination in the sight of God.

“The Law and the Prophets were until John; since then the good news of the kingdom of God is preached, and everyone forces his way into it.^e But it is easier for heaven and earth to pass away than for one dot of the Law to become void.

Divorce and Remarriage

“Everyone who divorces his wife and marries another commits adultery, and he who marries a woman divorced from her husband commits adultery.

The Rich Man and Lazarus

“There was a rich man who was clothed in purple and fine linen and who feasted sumptuously every day. And at his gate was laid a poor man named Lazarus, covered with sores, who desired to be fed with what fell from the rich man’s table. Moreover, even the dogs came and licked his sores. The poor man died and was carried by the angels to Abraham’s side.^f The rich man also died and was buried, and in Hades, being in torment, he lifted up his eyes and saw Abraham far off and Lazarus at his side. And he called out, ‘Father Abraham, have mercy on me, and send Lazarus to dip the end of his finger in water and cool my tongue, for I am in anguish in this flame.’ But Abraham said, ‘Child, remember that you in your lifetime received your good things, and Lazarus in like manner bad things; but now he is comforted here, and you are in anguish. And besides all this, between us and you a great chasm has been fixed, in order that those who would pass from here to you may not be able, and none may cross from there to us.’ And he said, ‘Then I beg you, father, to send him to my father’s house—for I have five brothers—so that he



Lazarus and the Rich Man

may warn them, lest they also come into this place of torment.’ But Abraham said, ‘They have Moses and the Prophets; let them hear them.’ And he said, ‘No, father Abraham, but if someone goes to them from the dead, they will repent.’ He said to him, ‘If they do not hear Moses and the Prophets, neither will they be convinced if someone should rise from the dead.’”

Սրբոցն Երուսաղեմի Հովհանն Զայրապետի, հայոց Հովհաննես Օձնեցի Հայրապետի, Հովհանն Ռրոտնեցի և Գրիգոր Տաթևացի վարդապետների հիշատակության օր

Մեծ Պահքի երրորդ շաբաթ օրն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին տոնում է Հայ Եկեղեցու նշանավոր աստվածաբան-եկեղեցականների՝ Հովհանն Օձնեցի Հայրապետի, Հովհանն Ռրոտնեցի և Գրիգոր Տաթևացի վարդապետների հիշատակության օրը: Մբ. Հովհաննես Օձնեցին, որին մեծարել են նաև Իմաստասեր անվամբ, Հայ Եկեղեցու սրբացված հայրապետներից է: Ըստ վարքագիրների՝ հոգևոր ու մտավոր կատարելությունից զատ, փայլել է նաև արտաքին վայելչությամբ՝ գահակալության 11 տարիների ընթացքում (717-728 թ.թ.):

Հովհաննես Օձնեցի կաթողիկոսը կարողացել է դիմակայել բյուզանդական ու արաբական ճնշումներին, պայքարել աղանդավորության դեմ: Օձնեցին թողել է հարուստ ու արժեքավոր գրական ժառանգություն: Նրա «Կանոնագիրք Հայոց»-ը հայ իրականության մեջ իրավաբանական առաջին մեծ ժողովածուն է, որտեղ ի մի են բերված եկեղեցական կանոնները: Նա հայտնի է նաև իբրև բազմաթիվ ճառերի հեղինակ և շարականագիր:

Սբ. Հովհաննես կաթողիկոսի գլխավոր ձեռնարկումներից են Հայ եկեղեցու բարեկարգման համար գումարված 726 թվականի Դվինի ժողովը, ինչպես նաև նույն թվականի Մանազկերտի ժողովը՝ կազմակերպված Հայ և Ասորի եկեղեցիների միության ամրապնդման նպատակով: Սբ. Հովհաննես Օձնեցի Հայրապետի շիրիմը գտնվում է իր հայրենի Օձունին մոտ՝ Արդվի գյուղի Սրբանես (Սբ. Հովհաննես) եկեղեցու բակում, որ դարձել է նվիրական ուխտատեղի հավատացյալ հայության համար:

Միմյանց կապված են Հովհաննես Որոտնեցի (1315-1388) և Գրիգոր Տաթևացի (1346-1410) վարդապետների անունները: Գրիգոր Տաթևացին՝ Հայ եկեղեցու «Եռամեծ» վարդապետն ու խոշորագույն աստվածաբանը, ուսանելով Հովհաննես Որոտնեցու մոտ, հետագայում իր բարձրակետին հասցրեց իր ուսուցչի կողմից հիմնած Տաթևի նշանավոր դպրոցը: Տաթևացին հեղինակ է աստվածաբանական մեծարժեք աշխատությունների ու քարոզների, որոնց շարքում առանձնացվում են «Գիրք Հարցմանց»-ը և քարոզգրքերը: Տաթևացու գրառումների շնորհիվ մեզ է հասել նաև Որոտնեցու գրական ժառանգության մի մասը: Հայ եկեղեցու երեք սրբերի հետ մեկտեղ նույն օրը նշվում է նաև 4-րդ դարի Երուսաղեմի Սբ. Հովհան Հայրապետի հիշատակության օրը: Երուսաղեմի հայրապետը հայտնի քարոզիչ էր:

Commemoration of St. John the Patriarch of Jerusalem, Armenian Patriarch St. John of Otzoon, St. John of Vorotan and St. Gregory of Datev

St. John (Hovhannes) of Otzoon, who has also been recognized as “the Philosopher”, is one of the greatest fathers of the Armenian Church. According to hagiographers, he possessed both spiritual and mental brilliance. During the 11 years of his reign (717-728), Catholicos Hovhannes managed to withstand Byzantine and Arab pressures and incursions, while struggling mightily against sects. Hovhannes of Otzoon endowed to us a rich and priceless literary legacy. His work entitled “Canons of the Armenians” is the first voluminous collection in Armenian history, which contains ecclesiastical canons and laws. He is also famous as the author of numerous sermons and church hymns. Among the most important initiatives undertaken by Catholicos Hovhannes of Otzoon, is the church council convened in Dvin in 725, with the aim of reforming the Armenian Church. He also convened the meeting in Manazkert in 726, dedicated to the goal of strengthening the union of the Armenian and Assyrian Churches.

The tomb of Catholicos Hovhannes is in the Church of Srbanes (St. Hovhannes) in the village of Ardvi, near his birthplace of Otzoon. The church has remained a sanctuary for the faithful of the Armenian Nation.

The names of Vartabeds (church divine or archimandrite) St John (Hovhan) of Vorotan (1315-1388) and St. Gregory of Datev (1346-1410) are closely interrelated. Gregory of Datev, the greatest Vartabed and theologian of the Armenian Church, studied under Hovhan of Vorotan, and later raised the famous school founded by his teacher in the Monastery of Datev. Gregory of Datev authored numerous significant theological works. Included in his literary legacy are the “Book of Questions” and the collections of his sermons. He is closely associated with Hovhan of Vorotan, because as a result of the notes and records made by Gregory, a portion of the literary legacy of Hovhan has survived to this day.

Finally, the blessed memory of St. John the Patriarch of Jerusalem is commemorated on the same day, along with the aforementioned three fathers of the Armenian Church. St. John was Patriarch of Jerusalem in the 4th Century. He is remembered to this day as being a great orator and a defender of Christianity through his sermons.

Տնտեսի կիրակի

Մեծ Պահքի չորրորդ կիրակին կոչվում է Տնտեսի, ըստ այդ օրվա խորհուրդը բացատրող անիրավ տնտեսի մասին առակի: Այն հիշատակում է միայն Ղուկաս ավետարանիչը, որի բովանդակությունը հետևյալն է:

Մի մեծահարուստ իմանում է, որ տնտեսը վատնում է իր ունեցվածքը, կանչում է նրան եւ հաշիվ պահանջում, որոշում հեռացնել աշխատանքից: Տնտեսը հասկանում է, որ կարող է անգործ մնալ, խորամանկության է դիմում: Նա կանչում է տիրոջ պարտապաններին, նրանց շնորհում իրենց ունեցած պարտքի մի մասը: Եվ այս ամենից հետո տերը գովում է տնտեսին՝ հնարամտությամբ վարվելու համար: Առաջին հայացքից թվում է, թե հակասություն կա այս գովեստի մեջ: Բայց անիրավ տնտեսը պարտապաններին շնորհում է այն, ինչն ավելիով գրել էր իր օգտին՝ պարտքի շնորհումով՝ ոչ մի վնաս չպատճառելով իր տիրոջը: Տերը գովում է տնտեսին՝ իր հասանելիք շահույթից հրաժարվելու համար: Այսինքն՝ հույժ գովելի է հրաժարումը, որն էլ հենց պահքի իմաստն է:

Պահքը մարդուն որեւէ գայթակղությունից հրաժարվելու ունակություն է սովորեցնում, հրաժարում, որից սկսվում է ինքնագսպումը կամ անձի ուրացումը: Քրիստոս ասում է. «Եվ ով իր խաչը չի վերցնում ու Իմ ետևից չի գալիս, Ինձ արժանի չէ» (Մատթ. 10:38): Այս առակը հորդորում է յուրաքանչյուրին հրաժարվելով և ինքնագսպմամբ հասնել փրկության: Առակի այլաբանական իմաստն այս է: Հարուստ մարդը խորհրդանշում է Աստծուն, անիրավ տնտեսը՝ մեղավորին, որը երկար ժամանակ անհոգ կերպով վատնում էր Աստծո տված շնորհները, մինչև որ Աստված նրան պատասխանատվության է կանչում: Անիրավ տնտեսը խորհրդանշում է այն բոլոր մարդկանց, ովքեր զոջում են, ներում իրենց պարտապանների պարտքերը եւ սիրելի դատնում հրեշտակներին ու արդարներին:

Sunday of Steward

The fourth Sunday of the period of Great Lent is called the Sunday of the Steward, and the message of the day teaches us with the parable of the unjust steward. This parable is mentioned only in the Gospel of St. Luke (Luke 16:1-13). In the parable, a wealthy man learns that the steward of his house (the supervisor of his holdings) is squandering his possessions. The rich man calls the steward, asking for an accounting, having decided to release him from employment. The steward, realizing that he may soon be without work, begins to act accordingly so that in the near future, others may accept him into their homes. The steward calls those men who have debts to his employer, and he relieves them of a portion of their debts. Following this act, the wealthy man praises the steward for his contrivance.

At first glance, it seems as though there is a great contradiction in this commendation. But the unjust steward grants back to the debtors, only that which he had added to the debt originally for his own gain. Thus, the wealthy man is not injured by the actions of his steward. The master praises the steward for resigning himself from the gains that the steward would have realized in these transactions. Thus, high praise is given to resignation, or abstinence, which is one of the foundations of Great Lent.

Lent teaches mankind about the ability we each have to resign ourselves from all forms of temptation, the beginning of which is self-control and self-denial. Christ says, "If any man will come after me, let him deny himself, and take up his cross and follow me" (Matthew 16:24). This parable admonishes every one of us that the journey towards salvation must include self-control and resignation. The allegorical meaning of the parable is in the wealthy man symbolizing God, and the unjust steward symbolizing the sinner. For an extended period of time, the sinner carelessly wastes the graces granted by God, until God calls him for an accounting of his life. The unjust steward symbolizes all who, upon regretting their actions, forgive those who have sinned against them, and become seekers of righteousness and the just.

WEDNESDAY 27TH March 2019 Michink

Be Strengthen in your journey and celebrate mid-lent together with St Yeghiche Ladies Guild, MICHINK a special luncheon with guest of honour His Grace Bishop Hovakim Manukyan.

Please join with your family and children our ladies on **27th March 2019 at Navasartian Centre** starting from 11:30 am. Your kind support to your St Yeghiche Armenian church is Highly appreciated. For the flyer visit our website or follow our Facebook at www.styeghiche.org.uk or <https://www.facebook.com/StYeghiche>

Special Services during the Great Lent

The Services of the Hour of Peace and the Hour of Rest will take place at St. Sarkis Church every Friday evening at 6:30 pm. Lenten food will be served at Gulbenkian hall (£5 donation pp). St Yeghiche Ladies Guild will be serving on **Friday 29th March 2019**. Please join and support their efforts.

Մեկնութիւն եւ պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Թեպետ եւ մի ժամանակ խաւար էիք, հիմա լոյս էք ի Տէր. ընթացէ՛ք ինչպէս լուսոյ որդիներ. քանզի լուսոյ պտուղներն են բարութիւնը, արդարութիւնը եւ ճշմարտութիւնը (Եփես. 5:8):

Քրիստոսով լուսոյ որդիներ դարձած սիրելիներ,

Մեծ Պահքի հոգեւոր ծովազնացութեան մէջ այս նաւահանգստին Տնտեսի կիրակի անունն է տրուել: Այսօրուայ հոգեշահ պատգամը, հոգեւոր դասը մեզ է գալիս Տիրոջ պատմած առակի միջից: Առակը ծանօթ է եւ յայտնի, թէ ինչպէս մի տնտես, տիրոջից արդէն հաշիւ տալու հրաման առնելով, վերջնահաշուից առաջ գիշում է իր տիրոջ պարտապանների պարտքի մի մասը: Դրանով շահում է այդ մարդկանց, որոնք յետոյ, երբ ինքն ազատուեր աշխատանքից, իրենց հարկերի տակ պատրաստ էին ընդունել նրան (Ղուկ.16:1-8): Ամենազարմանալին այն է, որ տերը, իմանալով դա, գովում է տնտեսի այս արարքը, որ իրաւունքի տեսակետից գողութիւն է, անիրաւութիւն: Բայց ինչո՞ւ է պատմում սա Յիսուս:

Պատասխանը Տիրոջ շեշտադրումից է հասկացուում: Քրիստոս, պատմելով սա, ընդգծում է բոլորովին այլ բան՝ մտքի ճարտարութիւնը. «Եւ տերը գովեց անիրաւ տնտեսին, որովհետեւ հնարամտութեամբ գործեց, քանի որ այս աշխարհի որդիները աւելի հնարամիտ են, քան լոյսի որդիները իրենց սերնդի մէջ» (Ղուկ.16:8): Հասարակութեան մէջ, հատկապէս աշխարհիկ միջավայրերում, բոլոր դարերում էլ դրամը մարդկանց իւրատեսակ չափման միակերպ է եղել: Մարդիկ անգամ դրամի չաստուածութիւն ունեին՝ մամոնան, որի դիւթանքին անգամ աստուածապաշտ հրեաները երբեմն չէին դիմանում: Հոգեւոր սայթաքումների մէջ դրամի գայթակղութիւնն էլ յետին տեղում չէր եւ չէ: Յիշենք թէկուզ դրամի պատճառով Քրիստոսի աշակերտ լինելը մերժող հարուստ երիտասարդին կամ երեսուն արծաթով ուրացութիւն յանձն առած աշակերտին: Այս շարքը, ցաւով պիտի ասենք, համալրուում է մինչեւ հիմա:

Յաճախ անիրաւութեամբ ձեռք բերուած դրամն էլ անիրաւ է կոչուել: Եւ այս առակի ամբողջ իմաստն այս աշխարհի անցողիկը հնարամտութեամբ գործածելով՝ յաւիտենականը ձեռք բերելն է: Ողորմութեամբ շահել հոգիներ. սա է գլխաւոր պատգամը, **քանի որ անողորմ դատաստան է լինելու նրա հանդէպ, ով ողորմած չի եղել** (Յակբ. 2:13): Ոմանք կարող են սա հաշուենկատութիւն կոչել, բայց արդիւնքն այն է, որ մարդիկ շնորհակալութեան եւ գնահատանքի զգացողութիւն են ունենում եւ աղօթքում նրանց համար, ովքեր ողորմած են եղել իրենց նկատմամբ: Որքան մեծ մեղաւորներ են դարձի եկել՝ աղքատներին բաժանելով իրենց ունեցուածքը եւ իրենց համար ամբողջ կեանքում աղօթողներ վաստակելով:

Ամբողջ Մեծ Պահքն է զանազան օրինակներով անընդհատ յուշում մեզ ողորմութեամբ դարմանել մեր պատճառած վերքերը, որովհետեւ այս կերպ ոչ միայն մարդկանց ենք շահում, այլ նաեւ Աստուծոն: Քրիստոս ասաց, որ ով աղքատին ողորմի, քաղցածին կերակրի, մերկին հագցնի, պանդուխտին հիւրընկալի, այցելի բանտարկեալին եւ հիւանդին, այս ամէնն իրեն արուած կհամարի: Դա կարող է ծածկել անօրէնութեան լեռներ, **քանզի ողորմածութիւնը բարձրագլուխ պարծենում է դատաստանի դիմաց** (Յակբ. 2:13):

Գալու է մի պահ, որ մենք աշխարհիկը աշխարհիկն պիտի տանք ու թողնենք, միայն մեր հոգին է, որ մեզ է մնում, անգամ մեր մարմինն ենք հագուստի պէս թողնելու: **Եւ ես ձեզ ասում եմ. անիրաւ մամոնայից ձեզ համար բարեկամներ արեք, որպէսզի, երբ այն պակասի, յաւիտենական յարկերի տակ ընդունեն ձեզ** (Ղուկ.16:9): Նոյնիսկ այն յարկերը, որոնց ներքոյ այժմ ապրում ենք, ժամանակաւոր են, մշտապէս մերը չեն, մեզ չեն մնալու: **Արդ, եթէ անիրաւ մամոնայի մէջ հաւատարիմ չեղաք, ձեզ ո՞վ կը վստահի ճշմարիտը: Եւ եթէ օտարինը եղող քանի մէջ հաւատարիմ չեղաք, ձերը ո՞վ կը տայ ձեզ** (Ղուկ. 15.11-12): Աստուածաշունչն ասում է, որ այս երկիքն ու երկիրը պիտի անցնեն եւ դրա համար: Ոչ Սուրբերից մեկն ասում է. ինձմբ տար հոգուդ, եղբայր, դա քո միակ գանձն է, դրանից բացի ոչինչ չի պատկանում քեզ: Այս մտքով է, որ մենք ամէն բան օգտագործում ենք հոգուն շահ բերելու համար, թէ՛ ամէն օր եւ թէ՛ մանաւանդ Մեծ Պահքի այս շրջանին:

Եկէք ուրեմն, մեր ձեռքի տակ եղած բոլոր միջոցներով, իբրեւ տնտեսներ մեր կեանքի, մեր հոգու համար հաւատարիմ բարեկամներ շահենք: սբ. Յովհան Ոսկեբերանն ասում է, որ բարեկամներ են աղքատները եւ նրանց արուող ողորմութեան համար չափն ու քանակը կարելու չեն:

Յետաքրքիր համեմատութեամբ մեր սուրբ Հայրերը տնտեսի կերպարը նոյնացրել են մեր մտքի հետ, որ երբ մարդ մահուան կանչն է ունենում, կեանքի հաշուետւութիւն է ունենալու: Եւ ձեթի ու ցորենի խորհրդանիշերի տակ մեր հոգին ու մարմինն են, երբ ողորմութեամբ հոգեւոր եւ մարմնաւոր մեղքերը՝ պարտքերը գիշում են: Իսկ Քրիստոս յիշեցնում է, որ աղքատներին միշտ ունենք մեզ հետ եւ ամէն պահը կարող ենք օգտագործել ողորմութիւն գործելու եւ Աստուծոյ էլ ողորմութեան արժանանալու համար: Յիշենք. ընտրութեան առաջ ենք մեր ազատ կամքով՝ հոգի՞ն, թէ՛ նիւթը, Աստուա՞ծ, թէ՛ մամոնան:

Ոչ մի ծառայ երկու տիրոջ ծառայել չի կարող. որովհետեւ, եթէ մէկին ատի, միւսին կը սիրի. կամ եթէ մէկին մեծարի, միւսին էլ կ'արհամարհի: Զեք կարող է՛ւ Աստուծուն ծառայել, է՛ւ մամոնային (Ղուկ. 15.10):

Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

3: Հոգեհանգիստ - Memorial Service

No Memorial service this week

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրինէքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանին 07548 777 147:

Maundy Thursday ԱԻԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ on 18th April Washing of the Feet (Ոսնչուայ)

Dear Parishioners, we are fast approaching the Holy Week services and one of the most popular service on Maundy Thursday, is the service of washing of the feet, starting at 16:30 at St Yeghiche Armenian Church.

We encourage all Parents and Grandparents to register the names of their boys with Rev Fr Nshan or the Parish Council Members for this service.

The children who have experienced this unique washing of the feet by clergy, stay in their memory.

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted.*

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

St Yeghiche Parish Council appeals to all members for **prompt** payment of their **annual membership dues and generous donations**, thus saving your parish administrative and postage costs.

Please hand in your membership dues and donations to the members of the Parish Council at the side entrance desk of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques pay-able to: **“St Yeghiche Armenian Church”**. You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.